ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/33

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.03.2018թ. թիվ 03/26-3/4965-18 գրությամբ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.03.2018թ. թիվ ԴՎԱ/900 գրության հիման վրա, 19.03.2018թ. թիվ 03/26-3/4965-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.03.2018թ. առարկությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.03.2018թ. թիվ ԴՎԱ/900 գրության հիման վրա, 19.03.2018թ. թիվ 03/26-3/4965-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը գտնում է, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով /այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր/ սահմանվել է հետևյալը.

Հավելված N 1
20 թ. կնքված
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/21» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

h/h	Անվանումը	Տեխնիկական բնութագրերը
1	Արևածաղկի ձեթ, ռաֆինացված (զտած) (Արևածաղկի ձեթ)	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված) ԳՕՍՏ 1129-2013: Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, մինչև 2 լ-նոց պոլիէթիլենային շշերով, ստվարաթղթե արկղերով մինչև 27 կգ-ոց տարողությամբ, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաքան 80%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

Արևածաղկի ձեթի պիտակի և արկղերի վրա դրոշմված լինի՝

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը և պայմանները
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
7. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, նշված ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
10. Ստվարաթղթե ամուր արկղերով:
11. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
12. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 09.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածի համաձայն.

Հավելված 6.1

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21»՝ ծածկագրով

բաց մրցույթի հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական

_____-ն, որպես

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/21»* ծածկագրով բաց մրցույթի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը

Հանձնաժողովի 02.03.2018թ. /հրապարակվել է www.gnumner.am կայքում 12.03.2018թ./ թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառության թիվ 6.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրերի՝ բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող *ծանոթության դաշտը*, ինչպես նաև բացակայում են պայմանագրի և համաձայնագրի կատարումը հավաստող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է շտկումները, սակայն չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտը, որի հիման վրա Հանձնաժողովը մերժել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը:

Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ միայն մեկ մասնակից է մասնակել գնման ընթացակարգին, որի հայտը մերժվել է:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 12.03.2018թ. հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ արձանագրությունը:

Ընկերության կողմից որպես իրավական հիմքեր նշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 34-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ «Կարգ»/ 32-րդ

կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, Կարգի 47-րդ կետը, Կարգի 48-րդ կետը, Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 3-րդ մասը, Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, նույն հոդվածի 9-րդ մասը, Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի թիվ 4 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարության համաձայն նշել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ ***անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ընթացակարգի հրավերի 2 մասի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն ***հրավերի 6-րդ հավելվածով*** նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն ***հավելված N 6.1-ի:***

Ընկերության կողմից ներկայացվել է թիվ 6.1 հավելվածը, այն է՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Սակայն Հանձնաժողովի 02.03.2018թ. /հրապարակվել է www.gnumner.am կայքում 12.03.2018թ./ թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ մասերով և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները, իսկ այս պարագայում կարելի է արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ Տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող թիվ 6.1 հավելվածում, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանություն գործել է ոչ իրավաչափ:

Ընկերությունը խնդրել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը չներառել ցուցակում»»:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 22.03.2018թ. ժամը 11:40-ին հավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.03.2018թ. թիվ ԴՎԱ/900 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ սահմանված կարգով ծանուցվել է մասնակցին:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումները թերի են կատարվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 22.03.2018թ. ժամը 11:40-ին հավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4. «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության, 1.1 կետով արձանագրել է, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ թիվ 6.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրերի, որտեղ բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթության դաշտը, ինչպես նաև բացակայում են պայմանագրի և կից համաձայնագրի կատարումը հավաստող փաստաթղթերը, ուստի հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 02.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ, մերժել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս շտկված փաստաթղթերում չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.03.2018թ. թիվ 03/26-3/4965-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.03.2018թ. թիվ ԴՎԱ/900 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

2) ***հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին***, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները***: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում **հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) ***շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.***

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար արևածաղկի ձեթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիրը, ներկայացված է հետևյալ տեսքով.

Հավելված N 1
20 թ. կնքված
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/21» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հ/հ	**Անվանումը**	**Տեխնիկական բնութագրերը**
1	Արևածաղկի ձեթ, ռաֆինացված (զտած) (Արևածաղկի ձեթ)	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված) ԳՕՍՏ 1129-2013: Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, մինչև 2 լ-նոց պոլիէթիլենային շշերով, սովարաթղթե արկղերով մինչև 27 կգ-ոց տարողությամբ, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

Արևածաղկի ձեթի պիտակի և արկղերի վրա դրոշմված լինի՝

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը

5. Պահպանման ժամկետը և պայմանները
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
7. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում,
ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով,
նշված ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
10. Ստվարաթղթե ամուր արկղերով:
11. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
12. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին առաջարկվել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«Ռեյփսիդ» ՍՊԸ-ն հայտի 6.1 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ թիվ

6.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրի, որտեղ բացակայում է հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթության դաշտը, ինչպես նաև բացակայում են պայմանագրի և կից համաձայնագրի կատարումը հավաստող փաստաթղթերը, ուստի հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 02.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ, մերժել է «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում շտկմամբ ներկայացված փաստաթղթերում չի ներկայացրել հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող «Ծանոթություն» դաշտը:

Այսպիսով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 2-րդ կետի համաձայն՝ հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:

Այսպիսով արձանագրում եմ, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ն հայտի 6.1 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում շտկմամբ ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը, իսկ ինչ վերաբերվում է Ընկերության կողմից Տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հայտի 6.1 հավելվածով չներկայացնելուն, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով չի սահմանվել, որ տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները՝ որոնք հանդիսանում են պայմանագիրը կնքելուց հետո ապրանքի մատակարարման փուլին վերաբերվող պայմաններ, հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող 6.1 հավելվածում, ուստի նման

պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, սույն մասով արձանագրելով անհամապատասխանություն, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 6.1-ը համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին:

Այսպիսով գտնում եմ, որ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով բաց մրցույթի շրջանակում չի խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով ստանձնած պարտավորություն, ուստի Ընկերությանը սույն հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.03.2018թ. թիվ 03/26-3/4965-18 գրությամբ «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90213881) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ